2213 h2
Z. 4.

# ԳԻՐՔ ԱՂՕ
# ԹԻՑ

Ասացեալ սրբոյն
Եփրեմի Խուրին Ա
սորւոյ։

Եւ այլ ոմանց սրբոց
Վարդապետաց։

Տպեցեալ հրամա
նաւ ամծաքան պատ
րիարքին տն Ովհան
նու ։

Թուին ՌՃԿԳ

Նվեր Հակոբ և Համազասպ Սարգսյան եղբայրներից
Հալեպ, Սիրիա, 1989 թ. Հոկտեմբեր



✠ Սուրբն Եփրեմ յանապատին աղօթէ. ըղձալարս անձին այլոց նպատակ յօրինէ. համանըման եղեգային անուցանէ. Հալածէ զչարութիւնս հոգւով սրբով եասէ:



2213

✠ Ա. Աղօթք զորս արար սուրբն Եփրեմ Խոստովանողն վասն ապաշխարութեան Խոստովանութեան. Ա.

1 Տես Տէր ըղձատառապանս իմ եւ զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս. դարձ ներեա եւ՛ի քեզ առաջնորդեա, որ առաջեր գթածութք առ իս. եւ ես դառնամ առ քեզ:

2 Ինձ լքելոյս ողորմեա. Ինձ եղկելոյս օգնեա. Ինձ խաւարելոյս ճառագայթեա. Ինձ մոլորելոյս առաջնորդեա. Ինձ խաւարելոյս ճառագայթեա. որ լի եմ մեղօք եւ անթիւ յանցանօք. եւ՛ի յորձանս անօրէնութեան տարաբերեալ ծփիմ:

3 Ո՛վ Պետրոսին ձեռն արկեա. գոչեմ ո՛վ մաքսաւորին արդարանալ:

4 Շնորհեա ո՛վ զաւազակին՝ բաց ինձ զդուռն կենաց ճանապարհին եւ մեծ արքունական առագաստին:

5 Ո՜վ խորք մծութե՟ եւ իմաստու-
թե՟՝ կա՛լ զմբռնեալս որ ի խորս
ծովուն անկեալ եմ մեղօք. զերծո
եւ զօրացո զիս առնել զկամս քո, որ
գա՛լ եւ լա՛լ ի տառէն եւ ի դժխէրի զամ՟
անօրէնութե՟ն եւ զչեղութե՟նս իմ:
6 Ա. ղբիւրդ կենդանութե՟՝ արբո՛
զծարաւ հոգւոյս իմ յառատաբուղխ
վտակէ քումմէ. որ պապակեալ տոչո-
րիմ ի բազում անօրէնութե՟ց իմոց.
խթեա՛ ի քարացեալ սիրտ իմ. եւ հո՛ս
ինձ արտասուս ապաշխարութե՟:
7 Պանծալդ ամ՟ բարութե՟ց՝ շնորհեա՛
ինձ դանկի միոյ չափ ի բազում քո
առատ բարեացդ, որ չարաչար եմ
աղքատացեալ եւ մերկացեալ. զգեցո՛
եւ կերակրեա՛ զիս արտասուօք ա-
պաշխարութե՟:
8 Լո՛յս ճշմարիտ քս՟՝ որ լուսաւո-
րես զամ՟ մարդ՝ լուսաւորեա՛ զխա-
ւարեալս մեղօք. բա՛ց զաչս սրտի
իմոյ.



իմոյ. եւ հաստատեա յերկիւղ եւ ի
սէր պատուիրանաց քոց:
9 Մի՛ դատեր. եւ մի՛ դատապարտեր
զիս տր՟ ըստ անբաւ չարեաց գործոց
իմոց. եւ մի՛ կացուսցես զիս ընդ այլ-
ոցն՝ որք զայրացուցին զքեզ. այլ
ընդ փառաւորեալսն փառաւո-
րեա՛. եւ ընդ պսակելոցն պսակեա՛. եւ
ընդ բերկրելոցն ուրախացո՛:
10 Դա՛տ է ինձ տր՟. բայց յուսամ յո-
ղորմութի՟ւնդ քո. զի եւ շունք կերակ-
րին ի փշրանաց անկելոց սեղանոյ
տն՟ իւրեանց. շուն կոչեա՛ զիս տր՟,
զի դայցեմ զկնի քո. հովի՛ւ բարի
խնդրեա՛ զիս զմոլորեալս. նաւա-
պետ բարի յս՟՝ փրկեա՛ զիս ի բազ-
մութե՟ ալեաց ծովու մեղաց իմոց.
եւ տո՛ւր ինձ նաւահանգիստ խաղա-
ղութե՟:
11 Տո՛ւր ինձ տր՟ սուրբ. եւ արտասուօք
կարողացո՛ զմաքրեմնս իմ. կակղեցո՛
զքա

զքարացեալ սիրտս իմ. և ծարաւեցո՛
զմիտս իմ՝ ի քեզ. ջնջեա՛ զբազմութիւն
յանցանաց իմոց. և շնորհեա՛ ինձ զօ-
գուտն իմ. ընկա՛լ և մի՛ անտես առ-
ներ զհառաչանս սրտի իմոյ։
12 Տո՛ւր ինձ իմաստութիւն. և տնկեա՛
տէր զահ և զերկիւղ քո՛ ՚ի սրտի իմում.
լուսաւորեա՛ զխորհուրդս իմ. կա-
րողացո՛ զմարմինս իմ ժուժկալու-
թեան կալ ՚ի պաշտամերանի քում յամ
ժամ։
13 Բա՛ց տէր զաչս սրտի իմոյ. և լուսա-
ւորեա՛ հոգւովդ սրբով. պարգևեա
ինձ առողջ խորհուրդս և առաքի-
նի վարս՝ ողբալ հանապազ. ահի՛ւ
և զգօնութեան կալ առաջի յամ ժամ
աներկբայ։
14 Ո՛վ բարերար և մարդասէր տէր՝
առանց չարչարանաց և ժուժկա-
լութեանց զի որդ ազատեսցես ՚ի բաղ-
մութենէ մեղաց իմոց. զի մարմնով
տկա՛ր



տկա՛ր եմ. և հոգւով խաւար. ողոր-
մեա՛ տէր՝ և ողջ կամիս օգնեա՛ ինձ։
15 Ա՛նոխակալ տէր՝ մի՛ յիշեր բազում չա-
րեաց իմոց անտես առներ զիս.
այլ դարձիր ՚ի յիս. և դարձո՛ զիմ
ցանկութիւն իմ՛ ի քեզ. և զքեզ միայն
սիրել ՚ի բոլոր սրտէ իմմէ. ՚ի նա՛աղ
և յանպաճուճ կերակրոց անբողջ
պահեա զմարմինս իմ։
16 Պատկերացո՛ տէր՝ զանհրաժեշտ
դատաստան քո առաջի աչաց իմոց. և
դողացո՛ զմարմինս իմ ահաւ և լալ
անդադար յերկիւղէ ահեղ դա-
տաստանաց քոց. և մի՛ փակեր զգութ
արարչական սիրոյ ՚ի ստեղծածոյս
քո որ մեղօք եմ մեռեալ։
17 Ա՛ճեցո տէր զբարիս գործել ինձ
յամ ժամ. և խափանեա՛ զամ չա-
րիս ՚ի չար մտաց իմոց. ՚ի պիղծ և յա-
նուղղայ գնացից՝ և ՚ի չար ատելու-
թե դարձուցեալ զիս. և հաստատեա
յեր

յերկիւղ եւ՛ ի սէր պատուիրանաց
քոց։
18 Արեգակնդ արդարութեան փըր
կիչ իմ եւ ազատիչդ Յ՟ս Ք՟ս ՚ի լոյս քո
ապաւինիմ· լուսաւորեա եւ ջերմա
ցո զներսս իմ· հրակիզեա զչար խոր
հուրդս իմ· եւ հալեա զսառնամա
նիք մեղաց իմոց· շնորհեա ինձ գա
րուն հոգւոյ իմոյ ծաղկել եւ պտղա
բերել զարդարութեան պտուղն։
19 Ազատիչդ Ք՟ս՝ ազատեա զիս ՚ի
դառնաշունչ օդոց մեղաց ձմերայ
նոց· զխաւարեալ եւ զսառուցեալ
հոգիս իմ պայծառացո եւ ջերմացո.
եւ ցօղեա զցօղն շնորհէ ջերմութեան
քո ՚ի յանդաստանս մտաց սրտի
իմոյ։
20 Շնչեա տ՟ր զհարաւ քաղցրութեան
շնչոյ հոգւոյդ սրբոյ ՚ի խամրեցեալ
եւ ՚ի թանձրացեալ սիրտս իմ· եւ զար
թօ որոտ ընդ ոստ փայլատակմամբ

քո

քո զսառնացեալ եւ զցամաքեալ մի
տըս իմ։
21 Բաց տ՟ր զփակեալ դուռն սրտի
իմոյ· եւ ծագեա ՚ի ներքս զլուսաւո
րութիւն ճառագայթից քոց· սրբեա եւ
զաղտ մեղաց իմոց· եւ զվէրս հոգւոյ
իմոյ բժշկեա· ամրացո երկիւղիւ
քո եւ զօրացո առնել զարդարութիւն
յա՟մ ժամ։
22 Աղբերացո տ՟ր զգլուխ իմ ՚ի բըղ
խումն արտասուաց· լուա զթարախ
հոգւոյ իմոյ· սրբեա զզգայարանս
իմ· եւ զգործօղս չարեաց փոխարկեա
՚ի զղջումն ջերմ սիրոյ քոյ ընդ աստ
մարմնով կեալ ՚ի պատուիրանս
քում։
23 Ձգեա տ՟ր զձեռն քո ՚ի նաւա
բեկեալս՝ որ ընկղմեալս եմ ՚ի խորս
չարեաց· փրկեա զիս ՚ի տատանիկ ծո
վածուփ բռնութենէ մեղաց իմոց
ալեաց· սանձեա տ՟ր եւ կարկեա ըղ

խստերախտ

երախտ միտս իմ ՚ի զբաղմանց ու-
նայնութեանց կենցաղոյս։

24 Արբո՛ Տէր զծարաւ հոգւոյ իմոյ
առատաբուղխ շնորհօք քովք. եւ
մի՛ անտես առներ զաղաչողութիւն սր-
տի իմոյ. պապակեալ ՚ի տապոյ չա-
րեաց իմոց. զովացո՛ ելեալ զպապակա
նեալ եւ զհոտեալ շրթունս իմ՝ ջրով
ողորմութեան քո։

25 Ծագեա՛ Տէր զլուսաւորութիւն եւ զ-
խաղաղութիւն շնորհաց քոց ՚ի սիրտ ի-
մում. եւ զխաւարին գիշեր մեղաց ՚ի
մտաց իմոց հալածեա՛, եւ մարմնոյ
իմոյ շնորհեա՛ զարիական վարս, ա-
ռաքինութեամբ կեալ ՚ի հաճոյս կամաց
քոց. եւ հան զփուշ մեղաց ՚ի սրտէ
իմմէ. զի հոգի իմ չարաչար վիրաւո
րի. եւ սերմանեա՛ սերմն բարի ՚ի սր
տի իմում աճեցուցանել եւ պտղաբե
րել զարդարութեան պտուղն։

26 Հալածեա՛ Տէր զխաւար ՚ի հոգւոյ
իմոյ.



իմոյ. եւ զգեցո՛ ՚ի լոյս արդարութեան
ճառագայթից քոց. զարդարեա՛ եր
կիւղիւ զղջմամբ եւ արտասուօք ըզ
սիրտ իմ. երկընչել ՚ի դատաստա-
նաց քոց. եւ պահել զմեծ պատուի-
րանս քո։

27 Զարթո՛ զիս Տէր յահագին խորու-
թենէ քնոյ մեղաց. եւ զտարակուսեալ
մարմինս իմ զգաստացո՛ յամ գործս
բարիս. խորհել միշտ մեծաւ եր
կիւղիւ, եւ առնել զհաճոյս քո յա-
մենայն ժամ։

28 Ազատեա՛ զիս Տէր ՚ի ծառայութենէ
մեղաց. եւ խառնեա՛ ՚ի թիւս ծառայ
ից քոց՝ որք սիրեցին զքեզ եւ զպատ
ուիրանս քո պահեցին. տո՛ւր զեր
կիւղ նոցա ՚ի սրտի իմում. եւ ուսո՛ զիս
գնալ ՚ի շաւիղս գնացից նոցա։

29 Թեթեւացո՛ զկարիս մարմնոյ ի-
մոյ. եւ յաճախեա՛ յիս զշնորհս հո-
գւոյդ սրբոյ, լինել տաճար եւ բնա
կա

կարան ամենայն կամաց քոց. անյագ
սիրով սիրել, զքեզ եւ ատել զամ
ցանկութիւնս եւ զսէր աշխարհիս այ
սորիկ. որով եղև կորուստ եւանգա
մըն հոգւոյս։

30 Ողորմեա՛ որ յանմարդաբնակ ա
նապատս. եւ՛ ի ձեռն սորին արժա
նաւորեա՛ զիս խառնել ընդ առա
ջին որ հարանցն արի եւ ըզգաստ
ժուժկալութեամբ ժառանգել զխոս
տացեալ պարգեւսն։

31 Առաջնորդեա՛ ինձ որ՛ ի նեղ եւ
՛ի նուրբ ճանապարհն. որ՛ առաջնոր
դեցեր սրբոց քոց. եզօրացո՛ զտկա
րութիւն իմ՝ ժուժկալութեամբ եւ համ
բերութեամբ գնալ ՛ի ճանապարհն քո
ջերմեռանդն սրտիւ։

32 Նայեա՛ց որ՛ ինեղեալ եւ՛ ի թարա
խեալ հոգիս իմ. եւ լուա՛ ամենայն ըզբ
րով. հոգևոր աղի՛ք համեմեա՛. եւ
անուշահոտ իւղով սրբով օծեա՛.

եւզկա



եւ զկատարեալ առողջութիւն ըն
ձեռեա՛։

33 Նօսրացո՛ որ զքուն աչաց իմոց.
եւ թափեա՛ զնիրհումն ՛ի գլխոյ իմոյ.
զի ծանրացեալ դանդաղանօք պա
շարէ զմարմինս իմ. արա՛ զիս տէր
արթունս եւ պատրաստ յամ ժամ.
զի զգաստութեամբ եւ արդարութեամբ վա
րեցից զկեանս իմ։

34 Տե՛ս որ զկքումն որովայնի իմոյ
որ զօրացեալ է իվերայ իմ. հանապազ
ցանկայ կերակրոյ եւ ըմպելւոյ. եւ
համեղութեան խորտկաց. այլ որ յամենա
կարօղ. կտրեա՛ զցանկութիւն մարմ
նոյս տենչանաց։

35 Նա՛ քանզի միտք իմ ցնդեալ պըղ
տորեալ բանդագուշեալ շրջի ՛ի
հոսանս. երկրաւոր կենցաղոյս. այլ
դու տէր լուսաւորեա՛ զաչս հոգ
ւոյս առուանց զբաղմանց եւ երկմտու
թեանց. արի եւ զգաստ ամենայն որ դոր

ծու

փութո՛վ գա՛լ զհետ ամենայն սիրոյ
քոյ.

36 Հալածեա՛ Տ՛ր զամ չար մտած-
մունս երկրաքարշս ՚ի խորհրդոց
մտաց իմոց. արմատ բարեաց տըն
կեա՛ հաստատութե՛ ՚ի սրտի իմում.
և պտուղ շնորհաց ՚ի հոգւոջս իմ նը
կարեա՛։

37 Աղաչեմ բարերար և ողորմած
տէր` արթունս և զուարթունս
պատրաստեա՛ զիս. տու՛ր ինձ գնալ
՚ի ճանապարհս քո բարի. զի արժա
նի եղէց մեծի փառաց քոց։

38 Ա՛յ քանզի ցանկութի ճաշակման
ամն ըղձալեցուցանէ զմիտս իմ.
արդ` հալածեա՛ զորկորստութի յի
նէն` յորմէ խաբեցայ միշտ. և կե
րակրեա՛ զիս երկնաւորե՛դ քով սըր
բով։

39 Առաքեա՛ Տ՛ր զմի ՚ի սերովբէից
քոյ` բերելով կայծակն հրոյ մեր

ձե



ձեցուցանել ՚ի շրթունս իմ և հան
ցէ ՚ի բաց զանօրէնութիւնս իմ. և զ
մեղս իմ` սրբեսցէ. և զխորհուրդս
իմ մաքրեսցէ. և զաղտեղութիւնս իմ`
ջնջեսցէ. և լուսաւորեսցէ զմիտս
իմ, ժառանգել նովա՛ ըղձեանն
յաւիտենից։

40 Առաքեա՛ տէր զբաժակ ուրա-
խարար հոգւոյդ սրբոյ ՚ի յերկնի-
ցս` որ ծարաւիմս առ քեզ. արբո՛
և զուարթացո՛ զեռանդն սիրոյ քոյ.
լո՛ւծ և ՚ի բաց ջնջեա՛ զմրուր դառ
նութե յանցանաց իմոց։

41 Առաքեա՛ Տ՛ր զլոյս քո. և լուսա
ւորեա՛ զմիտս իմ` և զխորհուրդս իմ
լուսով գիտութե քոյ. զխաւար մը
տաց իմոց հալածեա՛. և զտկարութի
անձին իմոյ կակղացո՛ ՚ի ջանս և ՚ի
վաստակս հոգւոյ իմոյ։

42 Առաքեա՛ Տ՛ր ըզհրեշտակ խա-
ղաղութե քոյ վերակացու և պահա

պան`

պան անձին իմոյ տէր իշխանութիւն.
գնալ ի վերայ իժի և քարբի. և կոխել
զամենայն զօրութիւնս թշնամւոյն. և զիս
պահեա՛ տէ՛ր որպէս բիբ ական ընդ հո-
վանեաւ թևոց քոց:

43 Յորժամ երթայցեմ ՚ի ճանա-
պարհի, մի՛ թողուր զիս միայն. այլ
առաքեա զօգնականութիւն քո զկնի
իմ. պահելով զիս յամենայն փորձութեանց
սատանայի ՚ի տուէ և ՚ի գիշերի. և
չտալ թոյլ մեղանչել յողդողդ և
թոյլ մտաց իմոց. այլ կածել զկամ
ի վերայ մեղաց և անօրէնութեան
իմոյ:

44 Պահեա զիս տէ՛ր ՚ի բանից և ՚ի
գործոց. ՚ի տեսութեանց և ՚ի գերերից
խորհրդոց. և զերկիւղ դատաստա-
նի քոյ տպաւորեա ՚ի սրտի իմում,
անզբաղ յօժարութեան մտօք փու-
թալ և պահել զպատուիրանս քո:

45 Փակեա տէր զդուռն մեղաց ի-



մոց. և բաց ինձ զդուռն լուսոյ և
արդարութեան. զի երկիւղալից օ-
րով ելից զհետ իմոյ արարչին, որ
ասացեր՝ եկա՛յք առ իս ամենայն աշխա-
տեալք. և դարձեալ թէ որ խնդրէ
առնու, որ հայցէ գտանէ, և որ
բախէ՝ բացցի նմա:

46 Նայեա՛ տէ՛ր ՚ի մերկութիւն անձին
իմոյ՝ զոր կողոպտեաց թշնամին. և
այժմ խայտառակ և ամօթալից
կամ առաջի քոյ. մարդասիրեա և
ընդգեցո ինձ հանդերձ. մո՛յծ և ու-
րախացո ՚ի կոչումն բազմելոց
քոց:

47 Զգեցո ինձ տէ՛ր զպատմուճանն
զառաջին զոր մերկացայ մեղօք ի-
մովք. ցո՛յց զանոխակալութիւն քո
յիս. և լուսափայլ ողորմութեամբ
քո զարդարեա զմերկութիւնս
իմ:

48 Լուր տէ՛ր աղաղակի անառա-



2213

կես՝ որ ամօթով կամ առաջի քո .
ըղձանձ հայրենի վատնեալ սովա-
մահ կորընչեմ . կերակրիլ հաւա-
սար եղէ խոզից անասնոց եւ նմանե-
ցայ նց:
49 Մի մերժեր զիս Տր ՚ի հայրենի
գթոյ քո . համարձակիմ ՚ի խնամ սի-
րոյ քո . ՚ի ծնողէդ վերջացայ . եւ
զորդիութին իմ ուրացայ . հայր մե-
ղայ յերկինս եւ առաջի քո . չեմ ար-
ժանի կոչիլ որդի քո . արա զիս իբ-
րեւ մի ՚ի վարձկանաց քոց :
50 Զարդարեա զիս Տր մեծամէ եր-
կիւղիւ քո . եւ դարձո յանառակու-
թէ ՚ի յարդարութի . յաղտեղութե
՚ի սրբութի ՚ի ծուլութե ՚ի զգաստու-
թի . ժուժկալութբ գնալ ՚ի ճանա-
պարհս քո ուղիղս:
51 Դադարեցո զիս Տր ՚ի չարաչար
խորհրդոց իմոց . ՚ի յառնելոյ զկամս
մտաց իմոց եւ մարմնոյ իմոյ . զահա-

գին

գին օր գալստեան քոյ Տր նկարեա՛
առաջի աչաց իմոց , դողալ եւ սար-
սել ՚ի դատաստանաց քոց:
52 Պայծառացո Տր զլապտեր հոգ-
ւոյ իմոյ որպէս կուսանացն իմաստ-
նոց . եւ շնորհեա պատրաստել արթ-
նութբ ընդ առաջ ելանել երկնա-
ւոր փեսային . զի մի մնասցուք ար-
տաքս ոպ յիմար կուսանն:
53 Ծանո Տր ինձ զճանապարհս քո .
եւ ուսո ինձ զարդարութիւնս քո . հե-
ռացո Տր զմարմինս իմ ՚ի խորհըր-
դոց չարեաց . եւ հաստատեա յեր-
կիւղ բարեաց Տր եւ անարատ կեալ
առաջի քոյ յամ ժամ:
54 Զանօրէնութիւնս իմ ջնջեա Տր .
՚ի լոյս բարեաց եւ յերկիւղ քո զմիտս
իմ բեւեռեա լցեալ սիրով սպասել
եւ ակն ունել մեծի գալստեան քոյ:
55 Զօրացո զիս Տր ՚ի պատուիրանաց
քոց . անսալ երկիւղիւ . դողալ եւ
սար

սարսափիլ՚ ի դատաստանաց քոց. խնդ-
րել զարդարութիւն եւ զերանութիւնս
երեսաց քոց. առնուլ ըզպարգեւս
շնորհաց քոց:

56 Ողորմեա զիս տէր՚ ի կապանաց
մեղաց իմոց. եւ ըզհնացեալս մեղօք
վերստին նորոգեա. եւ զխաւարեալ
ըզս՚ ի ցանկութէ մարմնոյս լուսա-
ւորեա. գնալով՚ ի ճանապարհս խա-
ղաղութե. զի տեսցեն աչք իմ ըզ
փրկութին քո. զոր պատրաստեցեր
սրբոց քոց:

57 Ողորմեա տր զանզղջելի հե-
ղանդութիւնս իմ. որ կարկամեալ
դնիմ՚ ի մահիճս մեղաց իմոց. եւ դե-
դերեալ կամ՚ ի դուռն երկրորդ-
սելօղմայ. ընդպասել եւակն ունել
մեծի գալստեան քոյ:

58 Հրամայեա տէր ինձ որպէս զան-
դամալուծին առողջանալ. խոր-
տակել զանկողինս ցաւոց իմոց.



շրջիլ ընդ կամարարս քո. ՚ի տան
տն եւ՚ ի գաւիթս տն ծաղկիլ եւ ոչ
մեղանչել. խորտակեա տր զբռնու-
թի սատանայի. հատ եւ՚ ի բաց ըն-
կեա զզօրութի նր. արգել զարձա-
կումն մց իմ. զի տարապարհակ
վարեալ ըզմարմինս իմ, տանի ընդ-
արձակութի ճանապարհի՝ որ տա-
նի՚ ի կորուստ եւ յապականու-
թիւն:

59 Երեւեցո տէր ըզըղաղեալ եւ մոռա-
ցեալ մտաց իմոց զահաւոր եւ ըզըսա-
կալի դատաստան քո. ըզպատիժս եւ
զփառս արդարոցն. եւզանշիջելի
տանջանս մեղաւորացն. եւ նոքօք
զարհուրեալ դողացո զմարմինս իմ
տեսանել զմահ հանապազ առաջի
աչաց իմոց:

60 Ողորմեա տր զմարմինս իմ ընդ-
երկիւղ քո. եւ ըզ սէր պատուիրանաց

քոյ՝ և ըզհրամայեալսն ՚ի նմա եր-
կիւղիւ լսել. առանց ձանձրութեան
կատարել միշտ՝ և մերկանալ ՚ի մե-
ղաց և ՚ի ցանկութեանց կենցաղոյս. և
պայծառանալ փառօք առաքի-
նութեան:

61 Փրկեա՛ զիս տէր ՚ի գաղտնածուղ-
նետից սատանայի. որ բազում մե-
քենայիւք պատեալ պաշարէ զիս.
աւար առեալ զմիտս իմ. վարէ ՚ի
գերութիւն ցանկութեան մեղաց առ-
նելով ծաղր և այպն կատականաց
թշնամեաց:

62 Սրբեա՛ զիս տէր յերկիւղ քո. և
զօրացո՛ զօրութեամբ քո. զհիւանդու-
թիւն հոգւոյ իմոյ առողջացո. և ըզ-
ցաւս մարմնոյս բժշկեա և ըզջեր-
մութիւն սրտի քո հաստատեա ՚ի սըր-
տի իմում, չարչարակից լինել սըր-
բոց քոց:

63 Պահեա՛ զգերեալս ՚ի սատանայէ.
և ըզմե



և ըզմեղօք վաճառեալս եգիպտա-
կան և խիստ տանջանացն. փրկեա՛
՚ի բռնակալ չար սպասաւորաց դե-
ւացն. և յեղեգնակոխ մեղացն հան-
ցես. և արկցես զիս յերկիրն աւե-
տեաց:

64 Ընկղմեա՛ տէր զթշնամին իմ ընդ-
զօրութեան փարաւոնի. զի սպառնա-
ցեալ էր իմ խորհրդոյս. դարձուցա-
նելով զիս յառաջին յանցանան ընդ-
իշխանութեամբ իւրով՝ ծառայել մե-
ղաց և անօրէնութեանց:

65 Մերծո՛ զիս տէր ՚ի լերինս քարան-
ձաւի. կամ ՚ի տեղի անապատի. ուր
և ողորմութիւն քո առաջնորդեսցէ
ինձ, հանդիպել մեծի փառաց ան-
ճառ քոյ. տալ ինձ զթևս աղաւնա-
կերպ հոգւոյդ սրբոյ. թռչել և վե-
րանալ խառնել յերամս արդա-
րոցն:

66 Բնակեցո՛ զիս տէր յօթևանս
ար

արդարոց քոց. եւ շնորհաբաշխ աշխա
տութեան սուրբ հարցն պարգե
ւեա ինձ. անտես արա ըզյանցանս
իմ եւ դասաւորեալ պայծառացո
ընդ սուրբս եւ ընդ սիրելիս ան
ուան քոյ։

67 Հաստատեա տէր զխաղաղութի֊
ն եւ զպայծառութիւն լուսոյ կենաց
անձին իմոյ. զի մի' խոտորեցիմ յաջ
կամ յահեակ. եւ դատապարտիմ յա
հաւոր գալստեան քոյ պահանջե
լով ըզյետին նաքարակիտն մինչ
իսպառ։

68 Մի' մերժեր զիս 'ի բազմագութ
ողորմութեանց քոց. զապաւինեալս
'ի քեզ ամրացո աներկիւղ պահե
լով յամենայն որոգայթից սատա
նայի. զի մի' գերի վարեալ տա
նիցէ զմիտս իմ 'ի զբաղու
մըն եւ 'ի չար ծա
ռայութի։



69 Ուսո զիս տէր առնել զարդա
րութի. խօսել զճշմարտութի. սի
րել զբարութի. ատել զաղտեղու
թի. խոտորիլ 'ի չարեաց. եւ գնալ 'ի
ճանապարհս բարեաց։

70 Պահեցո զիս տէր յորսողաց որ
գան ի վերայ իմ, ըմբռնել զիս 'ի մեղս
եւ 'ի ծուլութի անժուժկալութե.
մոռացումն առնել յանցանաց ի
մոց. եւ ոչ տալ յիշել զօր հատուց
ման. եւ զսարսելի պատասխանն որ
ասէ. երթայք յինէն անիծեալք
'ի հուրն յաւիտենից։

71 ✠ Կանգնեա զիս տէր 'ի գլորմա
նէ. եւ 'ի բազմամեղ անդընդային
խորութենէ վերացո եւ բարձրացո
թեւօք հոգւոյդ սրբոյ 'ի խնդրել
հածս հաճոյից. 'ի նորոգումն եւ 'ի
լուսաւորութիւն մտաց. 'ի զղջ
ումն մեղաց. եւ 'ի կատարումն ան
պատուիրանաց քոց։

72 Խնդրեմ տէր զեղծեալ եւ զկորու-
սեալ քո պատկերս. որ 'ի մէջ աղբի
եւ տղմի մեղաց թաւալեալ կամ. գի՛տ
ածեալ աւելաւ շնորհի քոյ եդի՛ր
'ի գանձանակին առաջին յորմէ ան-
կաւ:

73 Ե՛կ տէր 'ի տեսութիւն հիւանդա-
ցեալ հոգւոյ իմոյ. դի՛ր զձեռն քո
'ի վե՛ր իմ. բժշկեա՛ ասելով. զօրացի՛ր
ա՛ռ զմահիճս քո. եւ ե՛րթ 'ի տուն քո
արդարութեան:

74 Ե՛կ տէր 'ի խնդիր մոլորելոյս.
որ յածեալ շրջիմ արտաքոյ հօտի
պատուիրանաց քոց. գազանաբեկ է-
ղեալ եւ քարավէժ մեղօք կառափ-
նատիմ 'ի դիւաց. ըմբռնեա՛ եւ ա՛ծ
'ի փարախ հայրենի. եւ խառնեա՛ 'ի-
գառինս հօտի քոյ:

75 Հետեւեա՛ տէր զհետ ծողոպրելոյս
'ի քէն. արագապէս փութացի՛ր.
հա՛ս եւ ըմբռնեա՛ զապստամբեալս.

'ի ձայ



'ի ձայնէ կոչման քո. եդի՛ր 'ի բանդ-
կապանաց անխզելի սիրոյ քոյ:

66 Մ՛ի թողուր զիս տէր 'ի հեռանալ
սիրոյ պատուիրանաց քոց. եւ 'ի մե՛ղ-
րուց առաքինութեանց. այլ յորդո-
րեա՛ առաւելուլ յամ գործս ար-
դարութեան. առանց մեղաց եւ ա-
ռանց երբեք խափանուածոց պաշ-
տել զքեզ սրբութեամբ եւ արդարութեամբ
առաջի քոյ զամ աւուրս կենաց
իմոց:

77 Մ՛ի մատներ զիս տէր 'ի ցանկութեն
մեղաց. 'ի քուն աչաց եւ 'ի ցանկութեն
մտաց. այլ պարապեա՛ երկիւղիւ եւ
ապրեցո՛ յամենայն չար դիւաց
եւ յաշխարհական զբօսանաց:

78 Մ՛ի յապաղեր տալ ինձ զփրկութիւն
հոգւոյ եւ զջերմութիւն սիրոյ. զկերակ-
րոյ պարկեշտութիւն եւ զմարմնոյ ժուժ-
կալութիւն. զարտասուաց բղխումն.
զանդադար աղօթս. զհնազանդութիւն

եւ զհամ

և շնորհաբերութ՟ի յուսոյ:

79 Յաղթեա տէր հակառակամար-
տին իմոյ. և զօրացո զիս ընդդիմա-
կաց լինել պատերազմողին իմերոյ
իմ. և զգեցո ինձ զզրահն հաւատոյ.
պահօք և աղօթիւք սրբել զաղտս
ցանկութեան և զխորհուրդս մար-
մնական. և առնուլ զշնորհս փրկա-
կան:

80 Տուր ինձ տէր տեղի ապաշխա-
րութեան. աշխատութեան հան-
գիստ. խաղաղութեան հոգւոյ. և ար-
դարութեան ճանապարհ. ամրու-
թ՟ե զէն. հաստատուն յոյս. և այլն-
տութ՟ե երկնից:

81 Ընցո զիս տ՟ր ընդ անհուն ան-
ցից մեղաց խորաթաւիչ ծովահեղձ
ցանկական կենցաղոյս. և շնորհեա
ինձ ՚ի լոյս աչացս՝ և ՚ի մտացս տե-
սութ՟ի. ՚ի հանդիստ կենաց. ՚ի հան-
դիպումն շնորհաց. ՚ի շաւիղս ճա-
նա



նապարհացն արդարութ՟ե:

82 Շնորհեա ինձ տէր լալ աչացս.
արտասուաց հոսումն. մեղաց սուգ.
մտաց սրտի երկիւղ. ոսկերաց իմոց
սարսափումն և դողումն վ՟ն տանջա-
նաց. կենաց ճանապարհ. և անդա-
դար պաղատանս:

83 Արիացո զիս տէր ՚ի պատուէրա-
նաց պահպանութ՟ի. որով յայտնի
ժուժկալութ՟ի ՚ի մարտ պատերազ-
մի. բանսարկուին յաղթութ՟ի. ՚ի
մարմնի մեռանիլ. և պայծառանալ
՚ի հանդիսի:

84 Կեցո զիս տէր երկիւղիւ և զգուշ-
մամբ. արտասուօք և հառաչանօք.
սիրով և սրբութեամբ. շնորհօք և
ճշմարտութ՟բ. գիտութ՟բ և ամ՟
առաքինու
թեամբ:

85 Զննեա տ՟ր ըզբազմութ՟ի մեղաց
իմոց. և թափեա զմրուր դառնու-
յան

յանցանացս. և պարարեա՛ զխրատ իմ
արբմամբ սբ հոգւոյդ. և զփշաբեր
մարմինս իմ լցո՛ շնորհօք. զարգացո
և՛ ՚ի պտղաբերութին փոխարկեա՛:

86 Նորոգեցո՛ Տր զշնորհս քո՝ զգութ
և զողորմութին քո ՚ի պաշտօնեայս
քո. և տաճարացո՛ զիս բնակարան
լինել ամենասբ հոգւոյդ. մի ևս
ծառայել մեղաց և ապականութեց:

87 Բժշկեա՛ զիս Տր ՚ի հպարտութէ
և յանբարտաւանութէ. ՚ի սնափա
ռութէ. ՚ի մարդահաճութէ և յա
խակալութէ. ՚ի նախանձու և ՚ի յա
տելութէ և յամ չարութէ:

88 Փրկեա՛ զիս Տր ՚ի մարդկային գո
վեստից ՚ի փառաց և ՚ի մեծարանաց.
լոյս կարծելով զխաւարս համբա
ւեն իմի իմ բարի զեղկելիս և զո
ղորմելիս. համբաւեն զիս առաքի
նի. և ես եմ արտաքսելի և անթիւ
մեղօք լի. ծածկեա՛ զիս ՚ի լրուսոյ
սուտ



սուտ գովութեց և երանութեց.
զի ոչ գիտեն զմեղս իմ. երևիմ սըր
բութբ. և լի եմ աղտեղութբ. կեր
պարանիմ առաքինութբ և կեամ անա
ռակութբ. փայլեմ երկիւղածու
թբ և վարիմ մարդահաճութբ. ճա
նաչեմ զճշմարտութին և խօսիմ զսը
տութին. գիտեմ զարդարութին և
գործեմ զանօրէնութին:

89 Բաժանեա՛ զիս Տր ՚ի մեղաց և ՚ի բամ
բասանաց. և թող ինձ զանժուժկա
լութեն և զծուլութե. զորկորս
տութե և զդատարկաբանութե.
զցանկութին աղտեղութե. զհպարտ
ութին և զամ բիծս չարեաց:

90 Կացո՛ զիս Տէր հաստատուն ան
շարժ ՚ի տեղի փորձանաց պատե
րազմի. առանց երկիւղի քաջ և
պինդ հաստատով և յորդորական անձ
րով՝ զօրավիգ լինել ընդ եկելոց
դիմացն իմի իմ. զինեա՛ զիս ամրա
կուռ

կուռ զէնու քո տալ պատերազմ և
յաղթել թշնամւոյն հակառակա_
մարտի. որ կամի խայտառ զիս որսալ:
91 Ընկղմեալս Տէր՝ ի խորս մեղաց
հանցես ևբերցես ՚ի լոյս պատուի_
րանաց քոց. և առ քեզ կոչեսցես ըզ
հեռացեալս ՚ի քէն. և թողցես ըզ
գործս իմ անառակութե. զապա_
հինեալս ՚ի քեզ մխիթարեսցես.
զարձակեալս ՚ի կապոյ պատուհա_
նաց քոց ըմբռնեա ընդ լուծ սի_
րոյ քոյ:
92 Ո՛ գութ սիրոյ քո Տէր միածը_
րեա՛յքս. և զարգելեալս ՚ի կապա_
նաց բանտի արձակեա. և լուծեա ըզ
կապանս մեղաց իմոց. առաջնոր
դեա ինձ ՚ի ճանապարհ ևտեղի յոր
կեց պատրաստեա. և յաւակեա ընդ
Տէրս քո:
93 Հաղորդս արա զիս տէր Տծային
սիրոյ քոյ. սիրել զպատուիրանս քո.
եղանալ

եղանալ ՚ի ճանապարհս քո չորչա_
րել մինչև ցմահ վճ անուանդ քոյ.
մտանել ՚ի փառս և զաւիլ ընդ Տէրս
քո. և ուրախանալ միշտ ընդ կա_
մարարս քո:
94 Պ.թօ՛ ՚ի մեղուցեալ և յերկելէ
անձն իմ Տէր. խափանեա զանառակ
ցանկութիւնս իմ. սրբեա զաղտեղու
թի մեղաց. և քաւեա զանօրէնու
թիւնս իմ. բժշկեա զվէրահարեալ
հոգիս. և առողջացո զհիւանդա_
ցեալ մարմինս իմ. ցրուեա զչարն
յինէն. և ժողովեա զբարիս. և լից
զպակասութի իմ:
95 Տուաջէ քո աննկանիմ ևխնդրեմ
զթողութի մեղաց իմոց. զպաղատանս
իմ ընկալ. և քաւիչ լեր յանցանաց
իմոց. պայծառացո և լուսաւորեա
զխորհուրդս և զմիտս իմ. կարողա_
ցո զմարմինս իմ անդադար կալ ՚ի
փառաբանութի անուանդ քում
սրբոյ:

Ոան

96 Ո՛ անկելոց մեղօք կանգնեա
տէր· եղծելոյս 'ի թշնամւոյն դե-
ղատուծեա· բա՛րձ զցաւս մեղաց և
վէրացն զկսկիծ յանցանաց· յափշ-
տակեա՛ 'ի դաւուն մահճաց· և ազա-
տեա՛ յանողորմ տանջանաց· 'ի մարմ-
նական յղփանաց հեռացո՛ և 'ի դա-
սս ճգնաւորացն դասեցո՛։

97 Տէր վերակացու և պահապան
անձին իմոյ ո՛վ տէր իմ յս͞· պահեա՛
զիս 'ի դիւաց· և փրկեա զիս 'ի մարդ-
կային փորձանաց· հակառակողաց
յաղթեա՛ և կացո՛ զիս 'ի մէջ պատե-
րազմողաց քաջ և ընտիր լինել· զօր-
ծակցեա՛ ինձ լինել քաւարան մե-
ղաց· և համբերել վշտաց· առաքի-
նաջան գործովք հանդիպել քում
ա͞ծային շնորհացդ ։

98 Ո՛յ ինձ տէր՝ վայ ինձ· զի մեղօք
կործանեցայ · և մտօք իմովք աղտե-
ղեցայ · 'ի բարեաց ունայնացայ · և
'ի սի



'ի սիրոյ ցամաքեցայ· 'ի լալոյ խա-
ւարեցայ · և 'ի գնալոյ դադարե-
ցայ · ոչ ունիմ աչս լալոյ և արտաս-
ւաց· ծփիմ տարակուսեալ· զի յոյս
և ակն բարեաց ո՛չ ունիմ ։

99 Կանգնեա՛ տէր զտարաբերեալ
անձն իմ որ լի եմ մեղօք և անթիւ
յանցանօք· և խարշեալ և տրոհեալ
եմ ա͞մ անդամօքս· յոտից մինչև ցը
գլուխս ապականեալ· և չէք հնար
բժշկութե͞· եթէ ոչ 'ի քէն տէր
իմ յս͞· խոնարհեա՛ առ վիրաւորեա
լըս դեղատութե͞· և մի՛ գարշիր 'ի
չարահոտ ախտացելոյս։

100 Հեռացո՛ տէր զբերան իմ 'ի բամ-
բասելոյ· և զլեզու իմ 'ի չար խօսե-
լոյ· զականջս իմ 'ի չարաչար լսե-
լոյ· և զձեռս իմ 'ի յափշտակելոյ· և
զոտս իմ 'ի յանառակ գնացս երթա-
լոյ· և զա͞մ անդամս իմ զգաստացո՛
միշտ զհաճոյս քո կատարել։
Ա͞ն

101 Մեղայ քեզ Տէր մեղայ. զի յան-
ցեալ պատուիրանաց քոց. ի լուսոյ
կենաց ելոյ. և մտայ ի խաւար մե-
ղաց ցանկականաւորդ ապտերղութեց.
ի խորոյ քո հեռացայ ըմբռնեցայ
ի չարեն. և եղէ որդի կորստեան.
ողորմեա ինձ բազմամեղիս բարե-
րար. զի դու միայն ես մարդասէր:

102 Ի քեզ Տէր ապաւինիմ. որ քաւա-
րան ես մեղաւորաց. և փախուցե-
լոյս դարան. արա փախըստական
զթշնամին իմ. օգնական զայլ ոք ո՛չ
ունիմ. բայց զքեզ միայն ունիմ պա-
հապան անձին իմոյ. ի վտանգից
փրկեա. ի յորոգայթից ապրեցո. և
արժանի արա զիս լինել որդի յա-
ւիտենին:

103 Ողորմեա ինձ Տէր կենաց և քա-
ւիչ մեղաց. կատարիչ խնդրուա-
ծաց և արձակիչ կապելոց. բաշ-
խօղ պարգևաց. և տուիչ ամենայն
շնոր



շնորհաց:

104 Լո՛ւր Տէր զաղաչանս իմ. և ըն-
կա՛լ ըզպաղատանս իմ. քաւեա՛ ըզ
յանցանս իմ. և կատարեա՛ զխնդրու
ածս իմ. արձակեա՛ զկապանս իմ.
և բժշկեա՛ ըզհոգի իմ. առողջացո՛
զմարմինս իմ. և ուղղեա՛ զգնացս իմ.
փութացո՛ զիս ժամանել յօթևանս
սբց քոց:

105 Հալածեա՛ Տէր զբազում ախտա-
ժետութիւնս իմ. զցաւս ի մարմ-
նոյս. և զաղտ ի հոգւոյս. զքուն ի
գլխոյս. և զյագումն որկրոց. պա-
հեա՛ զխորհուրդս իմ անզբաղ. ըզ-
միտս իմ Տէր. և զիմաստս իմ լուսաւոր.
զցանկութիւնս առ քեզ. և զյօժա-
րութիւն յաղօթս ի տուէ և ի գիշե-
րի:

106 Բղխեա՛ Տէր ի գլուխ իմ աղ-
բիւր վտակաց. և զականս մտաց իմոց
ոռոգեա՛. զաղտ յանցանաց իմոց
լուա.

լուծն. եւ սրբեա զԹարախ վէրաց ի-
մոց. զփուշ մեղաց իմոց խլեա եւ տըն-
կեա զբոյս կենաց. աճեցո տէր զար-
դարուԹի. եւ նուաստացո զանօրէ-
նուԹի. մեռո ըզմարմնոյ ցանկու-
Թի. եւ նորոգեա զհոգւոյս կենդա-
նուԹի:

107 Աղաչեմ տէր զմեղուցեալ անձն
իմ ՚ի քեզ. զի մերձենալ առ քեզ ոչ
իշխեմ. պատկառիմ յամօԹոյ. եւ զար-
հուրիմ ՚ի գործոց իմոց. ոչ ունիմ
առ քեզ համարձակուԹի. զի ես ինձ
էն եմ կորուսեալ. ՚ի բաց պատուէ-
րանաց քոց հեռացայ. եւ մերկացայ
՚ի փառաց քոց. այլ դու տէր գԹա-
ծիս եւ ողորմեա. զի ըստեղծած եմ
անարատ ձեռաց քոց:

108 Ոչ իշխեմ տէր անյոյս լինել. զի
ողորմած ես գԹած. եւ փառս ան-
ճառ խոստացար դարձելոց մեղա-
ւորաց. այլ ես զարհուրիմ` եւ դո-



ղամ.

ղամ. եւ երկնչիմ ՚ի բազում եւ յան-
Թիւ մեղաց իմոց. զի պատրեալ խա-
բեցայ յորսողէն. եւ արդ զինչ լի-
նիմ եղկելիս որ տարակուսեալ եմ
՚ի կենաց:

109 Արա՛ զիս տէր ՚ի սուգ եւ յարտա-
սուս վասն մեղաց իմոց. զի ծանրա-
ցեալ եմ անօրէնուԹեամբ՝ բեռամբ՝
եւ յագեալ աղտեղի խորհրդով. շա՛տ
ներեցեր ինձ. զի ոչ խրատեցեր
զիս ՚ի մարմնի. արդ սարսեալ դո-
ղամ. Թէ ո՞չ մնան ինձ այսպիսի չա-
րեաց. աղաչեմ բարերար տէր՝ մի՛ կո-
չեր զիս յատենի. եւ տանջանաց մի՛
մատներ զիս. այլ փրկեա ՚ի հրոյ գե-
հենին. եւ ՚ի խոշտանգիցն ապրեցո. եւ
ողորմեա ինձ. զի դու միայն ես
մարդասէր:

110 Տո՛ւր ինձ տէր զի ծփանք տարակու-
սանաց պատեն զիս. եւ զախտ իմ խը-
ռովեն. զոր աղօԹեմ ոչ գիտեմ.



սաղ

սաղմոսեմ եւ՛ոչ իմանամ. շրթունք իմ բարբառին եւ միտք իմ ճողոպրեալ յածին այսր եւ անդր եւ ըզկայ-ումն ոչ ունի. եւ կամիմ զի կցէ անդ՝ ոչ դադարէ. ոչ տեսանեն արդեօք եւ ոչ ըմբռնեն. զուր աշխատեմ եւ ոչ ինչ օգտիմ. ոպ՟ ձայն հնչեալ պղնձի եւ ծնծղայի թափուր եւ ունայն դա-տիմ. եւ անպտուղ գտանիմ յամե-նայն բարեաց ։

111 Ընկալ տէր զմոլորեալս որ փա-խուցեալ կամ ՚ի լերինս. որպէս ծառայ չար ՚ի տնէ հալածեալ վս՟ մեղաց. եւ ՚ի մէջ եղբարց հրաժարեալ եմ. ՚ի մէջ պաշտամանց հեռացեալ՝ զի սիրող էի մեղաց. եւ նախատինք կրօնաւորաց. անյագ ՚ի մեղաց եւ ՚ի զեխանաց. անգութ էի աղքատաց. եւ հակառակ ըսպասաւորաց. ան-ողորմ էի հիւանդաց. եւ անմխի-թար աշխատողաց. չէի իսկ արժա-


նի

նի կեալ ՚ի մէջ ճգնաւո-
րաց ։

112 Հանգո տէր զշնորհս հոգւոյդ սրբոյ ՚ի վերայ իմ. որ միայն եմ ՚ի պատերազմի առանց օգնականի. սրբեա տէր զտաճար հոգւոյ իմոյ եւ առխաղեր ընդ երեկայս. բաց զաղտս հոգւոյ իմոյ. եւ լուսաւորեա զը-միտս եւ զխորհուրդս իմ. տուր ինձ զօրութիւն տէր իմ յիսուս եւ ընկալ զօրհնաբանութիւն բերանոյ իմոյ. ՚ի խոր քնոյ գիշերոյ զարթո զիս. դա-հանալ եւ օրհնել զքեզ՝ որով զմեղս իմ քաւեսցես. շնորհեա ինձ սուգ եւ արտասուս լալոյ եւզգա-լոյ. եւ անդադար աղօթելոյ առա-ջի քո ։

113 Պահեա տէր զդատապարտօղս իմ որ յանդգնին ՚ի վր՟ մարտնչեալ ընկ-


ցան

ցանկութենէ եւանժուժկալութենէ. ծուլութենէ եւորկորստութենէ. փա_ռասիրութենէ և մարդահաճութենէ. բարկութենէ եւտրտմութենէ. ատե_լութենէ եւչարաչար հայհոյութենէ. սնափառութենէ եւսնապարծութենէ. հպարտութենէ և ամբարտաւանու_թենէ. բանիւք եւգործովք եւխորհրդ_դովք՝ զորածաղում չենիլ եկն իմ. և ընկղմէ զիս՝ ի խոր չարեաց։

114 Սփռեա՛ տէր զշնորհս քո իվ՜ր մա_սանց անդամոց իմոց. լցո՛ տէր զմար_մին իմ արիութեամբ եւժուժկալութեամբ. եւզհոգիս իմ երկիւղիւ եւդողութեամբ. զսիրտ իմ սիրով և արդարութեամբ քո. և զմիտս իմ լուսով և իմաստութեամբ քո. զխորհուրդս իմ հանճարով գի_տութեան քոյ. եւզոտս իմ գնալ՝ ի շա_ւիղս արդարութեան. եւզբերան իմ անդադար սաղմոսել քեզ գոհու_թեամբ եւօրհնութեամբ. զաչս իմ յորդա_

բուղխ



բուղխ արտասուօք. եւզհոտոտե_լիս իմ հոտոտել զհոտ գիտութեան՝ ի կենանս. զլսելիս իմ՝ լսելով զձայնն աւետեաց որ ասէ. թողեա՛լ լիցին քեզ ամ՜ մեղք քո։

115 Մինչև յերբ անսաս տէր չար_գործողին. որ ո՛չ յագի իմով կորըս_տեամբ. այլ հանապազ սկիզբն առ_նէ չարեաց. և իբրև կորզեալ խա_փանէ զիս՝ ի բարեաց և յառաքի_նութենէ. և հեռացուցանէ զիս՝ ի սրբութենէ. և՛ ի յաճախութենէ կե_նաց արտաքս հանէ զիս. խաւարե_ցուցանէ զլուսաւորութիւն աչացս. եւապականելով գերէ զմիտս իմ. և վարէ զիս՝ ի չար ծառայութիւն յան_ցանաց. և՛ ի ձեռս անօրէն դահ_ճացն մատնէ զիս. և տանի՝ ի տեղի չարչարանաց. և արկանէ՝ ի բանդ_կապանաց մահու. կացուցանէ՝ ի մէջ խաւարայնոց ընդ սպասաւորաց.

և՛ ի

ե՛ւ խոստուանս մեղաց կապէ զիս.
Եւ արդ ես եղկելիս զի՞նչ լինիցիմ,
եթէ ոչ դու Տէր օգնես ինձ։

116 Տե՛ս տէր ըղձալիս և զողբալիս.
զպաղատելիս եղկելիս. ինձ ողոր-
մեա՛ անօրինելոյս. և շնորհեա՛ ինձ
յորդ արտասուս ՝ի գիշերի. և ընդ
շող շնորհաց քոց յառաւօտի.
բա՛ց զխաւարեալ աչս սրտի իմոյ. և
բժշկեա՛ զհիւանդացեալ հոգիս
իմ. ընկա՛լ ըզդարձ մեղաւորիս. և
մի՛ բարկանար բազմամեղիս տէր
իմ յիսուս. և քանզի անթի՛ւ ունիմ
զչարիս՝ ջնջեա՛ յինէն՝ և տուր ինձ
զշնորհս բարեաց։

117 Համարձակիմ տէր աղօթել առ
քեզ. խնդրեմ և ոչ իմանամ. զօգ-
տակարն հոգւոյս յայտնեա՛ ինձ
ո՛ղորմած տէր զկամս բարիս. և ու-
սո՛ ինձ զպատուիրանս քո. ըզբա-
րիս՝ զոր ոչ խնդրեմ և իմանամ
տէր



տէր ինձ տուր. և եթէ ոչ գործեմ
զբարիս, բարի արա՛ ինձ տէր. և
եթէ ոչ խնդրեմ զողորմութիւն,
ողորմութիւն շնորհեա՛ ինձ տէր.
և ըզհեռացեալս առ քեզ կոչեա՛.
և եթէ ոչ կամիմ, բռնաւորեա՛
և՛ ՝ի քեզ կորզեա՛. և եթէ ոչ կա-
միմ, դարձո՛ զիս. և եթէ ըմբռ-
նիմ յումեքէ, զերծո՛ զիս. եթէ
յերկրաւորս ըզբաղեցայ, ՝ի խոր-
հուրդս հոգեւորս ըզբաղեցո՛ զիս.
եթէ այսր և անդր գնալ ցընդիմ,
մի՛ թողուր զիս մինչև ըմբռնեալ
տարցես ՝ի տեղի յարկի փա-
ռաց քոց։

118 Ո՛վ հայր Տէր իմ յեղկեալ սիր-
տըս և՛ ՝ի զազրաւէր մարմինս. զի հող
եմ և մոխիր. սիրեմ զերկրաւորս և
ոչ փափաքեմ նայել յերկնայինսն.
այլ միշտ հեշտանամ ՝ի չարիս.
և ոչ

և ո՛չ տեսանեմ զանվախճան փառ-
սըն. և ո՛չ յիշեմ զառաւելին ընդ հար-
սըն զերանելեան. այլ ՚ի խորհուրդս աշ-
խարհիս թաւալեմ. և ո՛չ մաքրեալ
վերանամ դասիլ ընդ առաքինեան.
և զի մոռանամ զերկիւղ դատաս-
տանին. և ո՛չ դողամ յահագին դա-
ւըն տանջանացն՝ որ կայ պահեալ
մեղաւորաց. և ես ծուլանամ ան-
հոգ լինելով ՚ի փրկութեան կենաց.
շնորհեա՛ ինձ տէր սուգ և կոծ ան-
հանգիստ. և արտասուս աղաշա-
ւանաց:

119 Մի՛ յանդիմաներ զիս տէր յա-
ւուրն մեծի ահեղին. և մի՛ յատե-
նի հրապարակին կացուցաներ զիս ա-
մօթալի. և ՚ի տեղի ատենի մի՛ խայ-
տառակեր զիս. և մի՛ կշտամբեր յա-
տեան դատաստանին. և մի՛ թողուր
ինձ զո՛չ գիտեմն լսել. և զահաւոր
բարբառն ահաբեկ՝ որ ասէ եր-



թա՛յք յինէն ՚ի հուր գեհեննին. և
մի՛ ի բաց մերժեր ընդ վատ և ընդ
չար ծառայի. և ՚ի ձեռն անողորմ
կապողի մի՛ մատներ զիս. և մի՛ տար
կերակուր որթանց թունաւորաց
՚ի մէջ բորբոքեալ բոցոյ. և մի՛ արկա-
ներ զիս ՚ի խաւար սառնամանեացն
տարտարոսին. այլ փրկեա՛ զիս ՚ի
սաստիկ կայծականց հրոյ. ՚ի բոցե-
ղէն գետոց արշաւանացն. ՚ի սաս-
տիկ լալագին և խիստ տանջանացն.
և յողբոց տարակուսանաց. ՚ի կափ-
կափելոյ ատամանցն. և ՚ի խաւարու-
լի կսկծանաց. ՚ի տօչորմանէ խա-
ւարային բոցոյն. և ՚ի դըժընդակ
դառն աղէտից խորովելոյն. ՚ի բո-
ցածաւալ և ՚ի շրջապատ հրոյն. և ՚ի
կողկողաձայն և յանդադար վայոյն
փրկեա՛ և ազատեա՛ զիս տէր:

120 Ծանրացաւ տէր անօրէնութիւն
իմ ՚ի վերայ իմ. իբրև զբեռն աղի՛ կամ կա-

պարի բազում է աղտ ՚ի հոգիս իմ.
և անխտիր եմ ՚ի խմելս մարմնոյ. և զա-
նազան չարեօք լցեալ եմ. բայց
այլ ինչ ունիմ վատթարագոյն՝ զան-
զգուշութի մարմնոյ՝ որ քան զամ չա-
րիս է դառնագոյն. և զի յաղօթելն
իմում ծանծրանամ. և ՚ի հաղորդելն
ոչ իմանամ. ՚ի խնդրել զերանութի
պղերգանամ. և յերկիւղէ շնորհաց
դատարկանամ. տկարանամ մարմ-
նովս. և արձան աղէ սիրտ իմ լինի.
և ոչ ծագէ ՚ի ներս լոյսն անշիջա-
նելի. և յաճումն չարի ոչ սարսեալ
դողամ:

121 Շնորհեա ինձ տէր երկիւղ սըր-
բութե և ագոյ. և յորդորեա առ իս
աղբիւրս արտասուաց. թեթևացո
զծանրութի բեռանց իմոց. և անձե-
ցո առ իս տէր աղօթս. փութացիր
տէր և եկ ՚ի խնդիր մոլորելոյս. որ
մերժեալ եմ ՚ի վախճան կորստեան.



վս զի խաւարեցայ ՚ի լուսոյ. և ՚ի սի-
րոյ պատուիրանաց քոց խափանե-
ցայ. ՚ի չար թշնամոյն յաղթեցայ. և
նուաղեցայ յերկիւղէ քումմէ. տա-
պալեցայ ՚ի չար խորհրդոց չարին.
և ցամաքեցայ ՚ի շնորհաց արտա-
սուաց սիրոյ քոյ. խաբեցայ յունայն
բանից. և ՚ի լուսաւորութե մտաց
մոլորեցայ. աղտեղացայ մեղօք. և
զօր վախճանին մոռացայ:

122 Տարակուսիմ անյոյս լինելով՝
որ ոչ դոյ հնար ապաշխարութե. զի
մարմնովս տկարացայ պակասեալ ՚ի
զօրութե. և ծերացեալ նուաղե-
ցայ. սակայն ՚ի քեզ ապաւինիմ տէր
յն հասիր յօգնութի ծանրաբեռ-
նեալ ընկղմելոյս. և ազատեա զիս ՚ի
չարեաց. որ աղտեղեա ՚ի յանցմանց:

123 Ընկալ տէր ըզդոյզն շաղփաղփ ա-
ղօթս իմ. որ կամ առաջի քո դատա-
պարտեալ. այլ և ծոյլ ՚ի զգաստութե.

մոլորեալ եմ ՛ի մտաց. և յերկնաւորէ
ունայնացեալ եմ. բերան իմ այլ
ընդ այլոյ բարբանջէ. աչք իմ պըշ-
նուն. և միտք իմ զբաղնուն. ոչ անըզ-
բօս աղօթեմ. և ոչ սրտի մտօք խնդ-
րեմ. ոչ հաւատով առ քեզ գո-
չեմ. և ոչ երկիւղիւ կարդամ. ոչ
արտասուօք հայցեմ. և ոչ դողամ
և սարսիմ վս՟ աւուրն պատասխա-
նատուութեանց. և արդ տ՟ր՝ մի՛ ան-
սար. այլ փութապէս ա՛րկ յապաշ-
խարութ՟ի և ՛ի խոստովանութ՟ն հրոյ
սրբեալ և ազատեալ ՛ի մեղաց. մե-
ծաւ ջերմամբ եռացօ և ՛ի յորդոր
արտասուս և ՛ի պաղատանս և ՛ի խն-
դրուածս. և տպաւորեա՛ յիս զա-
ռաջին լուսաւորութ՟ե կերպարանն.

124 Ողորմեա՛ տ՟ր մեղաւորիս յանցա-
ւորիս անթիւ բազմութ՟բ. և դարձո՛
յապաշխարութ՟ի զգերիս վտարան-
դեալ. և մո՛յծ զիս յարքունական



փառսն. առաջնորդեա՛ ինձ զվե-
րին ճանապարհն գալ առ քեզ.
զի եթէ դու ոչ առաջնորդեսցես
ինձ, ես ոչ կարացից գալ. զի դու
իսկ հրամայեցեր եթէ ոչ ոք գայ
առ իս, եթէ ոչ հայր իմ ձգեսցէ
զնա. և արդ տ՟ր իմ գթած՝ մի՛ յի-
շեր զմեղս իմ յանձախ լրբութ՟ե՝ և
զանցառներ ՛ի ծառայէս քումմէ.
մի՛ թողուր զիս մնալ ՛ի նոյն չարիս.
և ՛ի կեանս աշխարհիս պատաղել.
այլ ող՟ ընթացեալ զկնի ծառայի
փախելոյ. այսպէս դարձուցանելով
զիս՝ թողցես զյանցանս իմ. և ա-
րասցես հաղորդս սրբոց կամարա-
րաց քոց:

125 Դարձո՛ տէր զցասումն բարկու-
թ՟ե քոյ յինէն. որ մեղօք բազմօք
իմովք տրտմեցուցի զքեզ. ողորմեա՛
ապստամբելոյս ՛ի քէն. և զանհնա-
րին գիջեալ կոյտս մեղաց իմոց ցըր-
ուեա՛.

հեա· ընդ քաղցր լծոյ ծառայութե
քո բեւեռեալ զմիտս իմ։
126 Պարգեւեա ինձ Տէր յն զլալումն
դաւթի· և զողբումն երեմիայի· զհա
ռաչումն պետրոսի· և զյորդառատ
վտակս արտասուաց կնոջն պոռն
կին· զի նստեալ լացից անդադար
՚ի տուընջեան և ՚ի գիշերի· զի արժա
նի եղէց սրբիլ ՚ի կեղտոյ և ՚ի թարա
խոյ· և յորդնալից վէրաց զերծանիլ·
և ՚ի բազմաբեւեռն չարեաց թեթեւա
նալ· և դասիլ ընդ սրբս քո։
127 Ողորմեա ինձ Տէր մի՛ յամենար· զի
առանց քո վաստակելոյ յիս ոչ եր
բեք գործի բարի· և ոչ սերմանեա
լըն յանդս հոգւոյ իմոյ բուսանի·
զի սերմն բանի քո որ յիս սերմանե
ցաւ՝ ՚ի չար թշնամւոյն քաղեցաւ·
և բուսեալն՝ այն ՚ի տապոյ չորա
ցաւ· և այն ՚ի մէջ փշոցն անկեալ
հեղձեալ ցամաքեցաւ· մշակելով
քո



